

ԵՍ ԶԵՄ ՎԼԱԽՆԱՐ ԴԺՈՒԽՔԵՆ

Ես չեմ վախնար դըժոխքէն,
Կեանքըս դըժոխք է արդէն.
Զինուորի պէս կըսուելով,
Մահէն օրերս կը խըլեմ:

Սատաններէն չեմ սոսկար.
Կիներն՝ անոնց նենգոթեան,
Այրերն՝ անոնց զաւերոն
Զիս կը պահեն միշտ տեղեակ:

Չեմ սարսափիր պակասէն
Եղբայրութեան ու սիրոյ.
Բարեկամներ, սիրունի
Զիս շատ անզամ լըքեր են:

Սէրերուս մէջ կըրակին
Ըզգացած եմ այրուցքներն,
Գիտցայ թէ ի՞նչ է ծարաւն
Անապատին մէջ կեանքիս:

Երազներուն սլոտութեան
Չընաւատալս է տանջանք,
Ժամերէն թո՛յն խըմել է
Առանց յոյսի ըսպասիլու:

Կա՞յ աւելի մեծ պատիժ
Քան թէ ըզգակ, մըտածել
Որ ըսպառումս է բառոյզ
Եւ ընդվըզումս անօգուտ:

Զանձրոյթիս մէջ ո՞ր չարիքն
Ինծի մընաց անձանօթ.
Տառապելէ վերջ այսքան
Տառապելէ դեռ վախնա՞մ:

* * *

Լ Ո Ւ Ս Ն Ի Ն

Սիրակարօս գիշերներուս, ո՞վ լուսին,
Մենութենէ խելայեղ
Հոգիս քեզի կ'ապաւինի, կը հանգչի
Լուսափըթիթ ծոցիդ մէջ,

Ու կը սիրէ քանի մը ժամ խօլօրէ՞ն
Հոգին կընոց մ'անձանօթ
Որ ինծի պէս, մենութենէ խելայեղ,
Ապաստանած է քեզի:

Ն Կ Ա Ր

Ի՞նչ յուսահատ մըտածումով պարտասուն
Գըլուխըդ գիրգ քիչ մը մէկ կողմ է հակեր.
Ի՞նչ ցաւ՝ գաղտնի կ'ուզես պահել ներսիդիդ
Որ գալկահար դէմքըդ՝ հեզնուու կը ժըպտի:

Երկրիս վըրայ ի՞նչ չարութիւն են տեսեր
Աչքերդ աղու որ երկինքն յար կը դիտեն.
Ի՞նչ անպատում տառապանքէ կը բըխի
Աղաչական նայուած քներուդ տըրտմութիւնն:

Ի՞նչ յոյզերով ցընցըւեցար, որ ա'յդպէս
Ուսերդ ի վար մազըդ ամբողջ բակուեր է.
Արդեօք սըրտիդ խորտակուելէ՞ն կը վախնաս
Որ ձեռքերով կուրծքըդ՝ ամուր սեղմեր ես:

Խորհուրդն ի՞նչ է շըրթունքներուդ անբարբառ,
Սիրե՞լ կ'ուզես թէ ոչ դադրիլ սիրելէ,
Մա՞նը կ'ուզես թէ յոյսերուդ յարութիւնն,
Հսէ՛, հէ՛ք կին, անունն ի՞նչ է թախիծիդ:

★ ★ ★

Տ Ա Պ Ա Ն Ա Գ Ի Ր

Ուսիին տակ հողակոյսիս մենաւոր
Պահ մը հանգէ՛, ո'վ անծանօթ այցելու.
Մի՛ վըրդովիր, մեսելներուն չէ տըրուած
Գերեզմանին գաղտնիքն յայտնիլ ողջերուն:

Ո'չ արտասուք կ'ուզեմ քեզմէ, ո'չ ծաղիկ.
Ո'չ խոստումներ վըրաս դամբան կանգնելու,
Եւ հակառակ լուկորներուս մերկութեան
Չեմ ուզեր գութ ինծի մուրաս երկինքէն:

Քեզի՛ ըլլան գինի, պերճանք, հեշտութիւն.
Քեզի՛ ըլլան առողջ, զրարթ ապրելու
Եւ տիազոսներ ունենալու վայելքներն:

Մէրը միայն երգէ՛ ինծի ողջերուն,
Մէրը որով տառապեցայ կեանքիս մէջ,
Մէրը որուն կը տառապիմ կարօտովն:

Լելզին

ՅՈՎԱԿԻՓ ՇԱՀԵՆ